ԱՍՏԱՊԱՏԻ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Ա. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Աստապատի ս. Ստեփանոս վանքը բազմիցս հիշատակվում է ինչպես XVII դարի պատմիչների, այնպես էլ ճանապարհորդների, ազգագիրների, վիմագիրների աշխատություններում։ Ի տարբերություն Հայաստանի XVII դարի ճարտարապետական բազմաթիվ համալիրների, Աստապատի վանքը այն սակավաթիվ հուշարձաններից է, որը չափագրվել և ներկայացվել է նաև մինչսովետական մասնագիտական գրականության մեջ։ Նրա հատակագիծը (մոտավոր, մի շարք անճշտություններով) և կառուցվածքների նկարագրությունը դեռ դարասկզբին հրատարակել է Երվանդ Լալայանը[1]։ Իսկ Ստրժիգովսկին իր ուսումնասիրության մեջ բերում է Լալայանի հրատարակած հատակագիծը և խոսում վանքի եկեղեցու մասին, ներկայացնելով այն որպես հայ ճարտարապետության երկու մոլիթով զմբեթավոր կառուցվածքների ներկայացուցիչ (Աքորիի VII դարի եկեղեցու հետ միասին)[2]։ Սակայն եթե Աստապատի վանքը XIX դարի վերջին և XX դարի սկզբին արդեն հայտնի էր գրականության մեջ և համեմատաբար ուսումնասիրված, ապա վերջին կես դարի ընթացքում այն դուրս էր մնացել հետազոտողների ուշադրությունից[3]։ Մինչդեռ իր ճարտարապետական մի շարք առանձնահատկությունների շնորհիվ Աստապատի համալիրը բավական հետաքրքիր և արժեքավոր է ուշ միջնադարի հայ ճարտարապետության պատմության համար։ Այդ բացը լրացվեց 1974 թ. ձմռանը ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի և Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության համատեղ դիտարշավի ընթացքում, երբ ուսումնասիրվեց և չափագրվեց արդեն կիսավեր Աստապատի վանքը։ Ցավոք, համալիրը ժամանակի ընթացքում բավական քանդվել է՝ փլվել են եկեղեցու գմբեթը, պատերի վերին մասը, դավթի ծածկի հարավ-արևմտյան հատվածն ու հարավային պատը, դեռ անցյալ դարում քանդվել էին պարիսպները և բնակելի ու կոմունալ շինությունները։ Այս պատճառով հնարավոր եղավ չափագրել միայն հիմնական հուշարձանախումբը՝ եկեղեցին և դավիթը, իսկ պարիսպների ու մյուս շինությունների ճարտարապետության մասին այժմ կարելի է պատկե-

---

1 Ե. Լալայան, Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան, Թիֆլիս, 1902, էջ 150—154։

2 Josef Strsygowski, Die Baukunst der Armenier und Europa. Wien. 1918, Band I, էջ 179։

3 Աստապատի պատմությանն է նվիրված Գ. Գրիգորյանի «Աստապատ և նրա վանքերը» («Էջմիածին», 1963, N 12) հոդվածը։ Աստապատի ս. Ստեփանոս վանքը հիշատակված է Փափազյանի 1890 թ. լուսանկարը վերահրապարակված է Ա. Այվազյանի «Նյութեր Նախիջևանի հայկական պատմական հուշարձանների վերաբերյալ» («Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 2) հաղորդման մեջ։

բացում կազմել միայն Մ. Փափազյանի՝ անցյալ դարի վերջին կատարած լուսանկարից[4]։

Աստապատի վանքը գտնվում է Նախիջևան քաղաքից հարավ, Արաքս գետի ձախ ափին, գետից բավական բարձր մի ապառաժոտ բլրի գագաթին։ Վանքը հայտնի է մի քանի անուններով՝ ըստ Առաքել Դավրիժեցու այն կոչվում է Ստեփանոս Նախավկայի անվամբ[5], պարիսպները և նրանց կից շինությունները կարմիր քարով կառուցված լինելու պատճառով կոչվում է Կարմիր վանք, ինչպես և Քարատակի վանք[6]։ Հայտնի է նաև հնդրակատար ս. Ստեփանոս անունով[7]։ Նախկին Աստապատ գյուղի մոտ գտնվելու պատճառով գրականության մեջ հաճախ այն անվանում են սոսկ Աստապատի վանք։ Վերջինն ավելի է տարածված ու նպատակահարմար, և մենք ներկա աշխատանքում այդ անունն ենք կիրառում, որովհետև Կարմիր վանք կամ Քարատակ ժողովրդական անվանումները ճիշտ չեն (Հայաստանում մի քանի տաճարակ եկեղեցի և վանք կոչվում են Կարմիր՝ քարի գույնի համար), իսկ Ստեփաննոս Նախավկա կոչվում է նաև Աստապատին հարևան, Արաքսի մյուս ափին կառուցված Գարաշամբի կամ Մաղարդա վանքը։

Աստապատի վանքը, հավանաբար, հիմնադրվել է գեռ վաղ միջնադարում, որովհետև արդեն 976 թ. այն հիշվում է Խաչիկ Ա. կաթողիկոսի կոնդակի մեջ և նույն թվականի խաչքար է ագուցված եկեղեցու դռան աջակողմում[8]։ Կյանքն Աստապատում հարատևել է մինչև ուշ միջնադար, որի վկայությունն են վանքի պատերում գրված 1277, 1471, 1477, 1481 թթ. խաչքարերը[9]։ Սակայն վանքը թե՛ ժամանակից և թե՛ հատկապես Շահ Աբբասի ասպատակություններից ավերվում է, որի պատճառով XVII դարում այն մի քանի անգամ վերակառուցվում է։ Աստապատի վանքը հիմնովին վերակառուցում է XVII դարի սկզբի խոշոր կրոնական գործիչ Պողոս Մոկացի վարդապետը, որը բազմաթիվ վանքեր ու դպրոցներ հիմնեց Հայաստանում, հատկապես Ատրպատականում և Գողթան գավառում՝ «..ի տեղիս հաստատէր դպրատունս, և յիւրոց աշակերտաց կացուցանէր դպրապետս, և զոմանս ի մանկանց դպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր... Իսկ սա ուր և հասանէր, հիմնարկէր եկեղեցին՝ պատշաճաւոր ձևով դեպ ուղիղ ընդարևելս ունելով զդիրս զեղեցիկ շինուածով խորանքն և լուսամուտին և կաթուղիկէն և այլքն ամենայն։ Եւ ըստ այսմ սարասի բարոգելով և զեկեղեցի շինելով, եհաս մինչ ի գիւղաքաղաքն Աստապատ, և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային է՝ ամուր պարսպիւ, և երկաթապատ դրամբք և յետ աւարտմանց վանիցն՝ սկսաւ զգեղջն եկեղեցին շինել...»[10]։ Պողոս Մոկացին Աստապատի վանքը պետք է կառուցած լինի մինչև 1618 թ., որովհետև այդ նույն թվականին նրա հակառակորդ ու թշնամի Մելքիսեդեկը բանտարկությունից ազատվելով, Շահ Աբբասի կողմից նշանակվեց կաթողիկոս և սկսեց հալածել Պողոս վարդա-

4 Մ. Փ ա փ ա զ յ ա ն, Գողթան գավառ (այրում), Վաղարշապատ, 1890։

5 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 270։

6 Ա լ ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 511։

7 Ե. Լ ա լ ա յ ա ն, Նախճավան, էջ 159։

8 Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 511։

9 Նույն տեղում։

10 Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 269—270։

պետին[11]: Վերջինս հեռացավ Սյունյաց մեծ անապատը, որտեղ և վախճանվեց 1621 թ.[12]: Իսկ Աստապատի վանքի շինարարության սկիզբը հնարավոր էր 1615—1616 թթ. թուրք-պարսկական հերթական պատերազմից հետո, երբ Նախիջևանը (հետևաբար և Աստապատը) դրավեցին թուրքերը և ապա ետ վերցվեց Շահ Աբբասի կողմից:



Կառույցի ընդհանուր տեսքը

Պողոս Մոկացու շինարարական գործունեության պահպանված վկայությունը վանքի տարածքը երկու մասի բաժանող պարսպի մուտքի կամարի վրա փորագրված արձանագրությունն է. «Ի ժամանակս պարսից արքային Շահապասի ես Պողոս վարդապետս Մումայ եպս առաջնորդ եւ մեք աստապատեցի քահանայք և ժողովուրդք նորոգեցինք ըզպարիսպս զայս եւ ընկերօքս իմ շինեցինք ըզպարիսպս ի հիմանց կամաւն ամենակալին Յսի»[13]:

XVII դարի կեսերին վանքը հիմնովին վերակառուցում է Աստապատի Հակոբ վարդապետը («...շինեալ պայծառացոյց ըզբովանդակն, զպարիսպն և զեկեղեցին և զամենայն չորս ի նմա կան շինուածքս»[14]), որը թաղված է եկեղեցու հարավային կողմում. նրա գերեզմանը ունի 1673 թ. տապանագիր[15]: Վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետը XVII դարի վերջում վերանորոգում է պարիսպները և կառուցում արևմտյան կողմի շինությունները. «... յամի 1697 սկզբին եղեւ շինութեան սուրբ Ուխտիս ի կողմն յարեւմտեան, կոփածոյ

11 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, Բեյրութ, 1960, էջ 2349:

12 Նույն տեղում, էջ 2350:

13 Յովհաննես եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. 2, էջմիածին, 1842, էջ 300:

14 Ալիշան, Սիսական, էջ 507:

15 Ե. Լալայան, Նախճավան, էջ 154:

վիմօք, ներքնատնօք և վերնատնօք զարդարեալ կամարակապ»[16]։ Շինարարությունը ավարտվել է մինչև 1706 թ., որովհետև այդ թվականին Հովսեփ վարդապետը վախճանվել է և թաղվել վանքի գավթում[17]։

Արևելյան դարսպի մեծ դարպասի վրայի արձանագրությունը պատկանում է 1707 թ. և «...յիշատակ է պարիսպս վերակացու Յովհաննէս վարդապետին...»[18]։

XIX դարի սկզբին պարսից թագաժառանգ Աբբաս Միրզան քանդում է արևելյան պարիսպը լրիվ և հարավայինը՝ մինչև դարպասը ու բարերն օգտագործում իր կառուցած Աբասապատ ամրոցի «խանդակը» շինելու համար[19]։

1831 թ. Նիկողայոս վարդապետը նորոգում է եկեղեցու հիմնապատերը, սակայն 1840 թ. երկրաշարժից վանքը բավական վնասվում է. «...Ճեղքեցաւ ի տեղիս զանդակատունն եկեղեցոյ մենաստանիս՝ որ ի վերայ դաւթին և ինչ խարխալմունք ի սենեակսն և ի պարիսպն. քանդեցան իսպառ ձիթհանք և ջրաղացն...»[20]։ Սակայն Աստապատի վանքը վերստին նորոգվում է և 1890 թ. Փափազյանի լուսանկարում այն հիմնականում կանգուն է, բացառությամբ գավթի զանդակատան։ Վերանորոգումը հավանաբար կատարվել է 1870-ական թթ., երբ վանքի առաջնորդը Հովակիմ եպիսկոպոսն էր[21]։ XX դարի սկզբին Աստապատի վանքը փաստորեն լքված էր և մասամբ ավերված, որովհետև վանահայրը «...վանքի սենյակները երկաթուղու դիծը անցկացնող կապալառուին տվել էր օգտվելու այն պայմանով, որ նա վերանորոգեն եկեղեցու մի քանի խախտված մասերը»[22]։ Այժմ, ինչպես նշվեց, քանդված են նաև Աստապատի վանքի եկեղեցու գմբեթը, պարսպապատերը և նրանց կից շենքերը։ Սակայն թե՛ վանքի և թե՛ եկեղեցու ծավալա-տարածական հորինվածքը հնարավոր է վերականգնել անցյալ դարի լուսանկարների և Լալայանի նկարագրության հիման վրա (վերջինս ամենայն բարեխղճությամբ նկարագրում է նաև մանրամասներն ու եկեղեցու որմնանկարների բովանդակությունը)։

Աստապատի վանքի գլխավոր հատակագիծը կրկնում է Հայաստանի XVII—XVIII դդ. համալիրների հորինվածքը։ Մոտավորապես ուղղանկյուն պարսպապատերով շրջափակված տարածության մեջտեղում բարձրանում են եկեղեցին և նրան արևմուտքից կից գավիթը։ Պարիսպներին ներսի կողմից պարագծով կից կառուցված են բնակելի և կոմունալ շինությունները։ Այսպիսի գլխավոր հատակագիծ ունեն Հայաստանի ուշ միջնադարի վանքերի և անապատների ճարտարապետական համալիրները, լինի դա Այրարատում, Սյունիքում թե Վասպուրականում։ Աստապատում ևս համակառույցը ենթարկված է ֆունկցիոնալ զոնավորման՝ այն պարսպով բաժանվել է երկու մասի, որոնցից արևմտյանում՝ գտնվում են պաշտամունքային և բնակելի կառուցվածքները, իսկ արևելյանում՝ գոմը, մթերանոցները, կոմունալ մյուս շենքերը. «Այս պարիսպ գոլով երկար քառանկիւնի յարևելից յարևմուտս բաժանեալ է յեր-

16 Ալիշան, Սիսական, էջ 513։
17 Նույն տեղում։
18 Ե. Լալայան, Նախճավան, էջ 156։
19 Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 301։
20 Նույն տեղում։
21 Ալիշան, Սիսական, էջ 513։
22 Ե. Լալայան, Նախճավան, էջ 151—152։

կուս. ի բաժնի անդ արևմտեան է տաճարն և կացարանք միաբանիցն քարաշենք հանդերձ պարսպօքն, իսկ յարևելեան բաժնի տեղիքն անասնոց և վերաբերելոյն այնց. միակ պարիսպն, որ բաժանէ զմենաստանն յերկուս, գոլով ի հողոյ՝ քայքայեալ է ինքնին...»[23]։ Վանքի արևելյան մասի թե՛ պարիսպը և թե՛ նշված շինությունները այժմ անհետացել են։ Սակայն այս նկարագրությունից պարզվում է, որ հենց սկզբից ևեթ (ինչպես նշվեց, ըստ արձանագրության այս միջանկյալ պարիսպը և նրան կից շինությունները կառուցել էր դեռ Պողոս վարդապետը) համալիրն ըստ շինությունների նշանակության հստակ բաժանվել է երկու մասի։ Այսպիսի ֆունկցիոնալ բաժանումը, երբ կոմունալ շինությունները ներքին պարսպով առանձնացվել են հիմնական կառույցներից և տեղադրվել վանքի մուտքի մոտ, ունեն XVII դ. Տաթևի մեծ անապատը, Շատին վանքը Սյունիքում, ս. Թադեի վանքը[24] Ատրպատականում և այլն։ Սա կարևոր է նաև պաշտպանական տեսակետից՝ արտաքին և տնտեսական շենքերով ստացվող բակը ներթափանցելուց հետո միայն հնարավոր է մոտենալ վանքի հիմնական կառուցվածքներին։

Աստապատի եկեղեցին կենտրոնագմբեթ կառուցվածքին մոտ համաչափություններ ունի՝ այն արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ քիչ է ձգված (լայնության և երկարության մոտավոր հարաբերությունն է՝ 1:1,3)։ Հուշարձանի այսպիսի համաչափության պատճառը նրա հատակագծային հորինվածքն է. այն ունի միայն մեկ զույգ մույթ, և գմբեթը բարձրանում է մույթերի միջև ու մույթերից դեպի բեմի աբսիդի արևմտյան պատը գցված կամարներով ստացվող գմբեթատակ քառակուսու վրա։ Նման հորինվածքը տարածված չէ ուշ միջնադարի հայ ճարտարապետության մեջ և ընդհանրապես սակավ է հանդիպում Հայաստանի ճարտարապետական հուշարձաններում։ Վաղ միջնադարում մեզ հայտնի մյուս օրինակը Անաստաս կաթողիկոսի Աքորիում կառուցած եկեղեցին է (661—668), իսկ ավելի ուշ այն հանդիպում է Վասպուրականի Սքանչելագործ վանքում։ Այս կառուցվածքներում, քառամույթ գմբեթավոր հուշարձանների VII դարում տարածված հորինվածքը (Մրեն, Գայանե, Բագավան) ստեղծագործաբար վերամշակելով ստացել են մեկ զույգ մույթերով գմբեթավոր շենք, որտեղ ազատվել են արևելյան կողմի մույթերից, և գմբեթակիր կամարները արևելքում հենվում են բեմի աբսիդի կոնստրուկտիվ առումով բավական ուժեղ անկյունների վրա։ Ուշ միջնադարում ոչ Այրարատում և ոչ Սյունիքում այս հորինվածքը չի հանդիպում։ Աստապատին հարևան Գողթան և Երնջակ գավառներում նույնպես, որպես կանոն, կիրառվել է ավանդական քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքը (Ագուլիսի ս. Թովմայի վանքը, Ագուլիսի XVII—XVIII դդ. եկեղեցիները, Երնջակի ս. Կարապետ, Փառակայի ս. Հակոբ վանքերը, Ցղնայի Աստվածածին, Շոռոթի եկեղեցիները և այլն)։ Սակայն եթե Աստապատի եկեղեցու այս հորինվածքը բացառիկ է XVII դ. Արևելյան Հայաստանի համար, ապա այն բավական ընդունված էր ուշ միջնադարում Վասպուրականում. մեկ զույգ մույթով գմբեթավոր կառուցվածքներ են Կտուց անապատի, Կարմրավոր Աստվածածնի վանքի, Ջարահան ս. Նշան վանքի եկեղեցիները[25]։ Բայց եթե

---

23 Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 299։

24 «Documenti di architettura Armena», 4. S. Thadei vank, Milano, 1971.

25 Տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն, Վասպուրական, Նշանավոր վանքեր, Աղբակ, Թիֆլիս, 1912։

հատակագծի ընդհանուր համաչափություններով այս եկեղեցիները նման են Աստապատի հուշարձանին, ապա ծավալա-տարածական ողջ հորինվածքում կան էական տարբերություններ։ Ամենակարևորը գմբեթի տեղադրության հարցն է։ Եթե, օրինակ, Կտուց անապատի, ս. Կարապետի և Զարահան ս. Նշանի եկեղեցիների գմբեթները տեղադրված են ողջ հորինվածքի համարյա մեջտեղում, և իրենց ծավալային լուծմամբ այդ հուշարձանները նման են կենտրոնագմբեթ կառուցվածքներին, ապա Աստապատում այն զգալի տեղաշարժված է դեպի արևելք։ Համարյա քառակուսի հատակագիծ (10,25×11,05 մ) ունեցող աղոթասրահի արևմտյան հատվածը մույթերից



Կառույցի գլխավոր հատակագիծը

դեպի աբսիդն ընկած տարածության համեմատ ավելի երկար է։ Տարբերությունն ավելի է մեծանում արևմտյան որմնամույթերի զգալի երկարությամբ. եթե ընդերկայնական պատերի որմնամույթերը պատի հարթությունից դուրս են գալիս ընդամենը 0,16 մ, ապա արևմտյանները՝ 1,06 մ։

Ինչպես տեսանք, Աստապատի եկեղեցու հատակագիծը ունի անհամաչափ լուծում։ Շինարարները չեն կրկնել ավանդական ձևերը, այլ վերացնելով արևելյան մույթերը և դրանց փոխարեն որպես հենարան օգտագործելով բեմի աբսիդի ուժեղ և հաստատուն պատերը, մեծապես ուժեղացրել են ինչպես կառուցվածքի ընդհանուր ամրությունը, այնպես էլ սեյսմակայունությունը։ Իրենց չափերով բավական հզոր են և մույթերը՝ նրանք ուղղանկյուն են և կտրվածքում ունեն 1,25×1,00 մ չափերը։ Սեյսմակայունությանը նպաստում է նաև մույթերից դեպի երկայնական պատերը ընկած և գմբեթակիր արևմտյան կամարների չափազանց մեծ լայնությունը՝ 2,25 մ։

Աստապատի եկեղեցու հատակագծի մյուս առանձնահատկություններից է բեմի խորանի բազմանիստ (հնգանիստ) լինելը։ Խորանի նման ձևը բնորոշ է Հայաստանի ճարտարապետական հուշարձաններին, ընդունված են բեմի կիսաշրջանաձև կամ պայտաձև (վաղ միջնադարում) և սակավ՝ ուղղանկյուն

հատակագծերը։ Սակայն եթե Աստապատի եկեղեցու բեմն իր նմանօրինակը չունի բուն Հայաստանում, ապա հենց նույն XVII դարում բազմանիստ խորաններ հանդիպում են հարևան Պարսկաստանի հայ նշանավոր գաղթօջախ Նոր-Ջուղայում. այստեղ եռանիստ բեմի աբսիդ ունեն ս. Ամենափրկիչ վանքը (1658), ս. Գևորգ (1611), ս. Աստվածածին (1613), ս. Ստեփանոս (1614), Բեթղեհեմի (1627), ս. Սարգսի (1609, վերակառուցված 1881 թ.), ս. Մինաս (1663) եկեղեցիները և ուրիշները[36]։ Խորանի նիստերը մշակված են խոր ու բարձր խորշերով, որոնք ավարտվում են շեշտված պայտաձև կամարներով։ Միջին խորշից դեպի դուրս բացվում է լայն լուսամուտ, իսկ



Կառույցի ինտերյերը և մուտքը գավթից

մյուս խորշերը զարդարված են որմնանկարներով։ Բեմի երկու կողմերում տեղադրված են ուղղանկյուն հատակագծով ավանդատներ, որոնք արևելյան պատում ունեն դրսից նեղ ու դեպի ներս լայնացող լուսամուտներ։ Ավանդատների, ինչպես և աղոթասրահի բոլոր պատերում կան խորշեր՝ «պատրհաններ», սլաքաձև կամարով ծածկված։

Աստապատի եկեղեցին կառուցված է թեքադիր տեղանքի վրա, որի հետևանքով արևելյան կողմում հատակը զգալի բարձր է գետնից։ Կառուցողներն օգտագործել են այս հանգամանքը և բեմի ու ավանդատների հատակի տակ իրականացրել են նկուղային հարկ, դեպի ուր կարելի է իջնել եկեղեցու միջից, շարժական սանդուղքով։ Այն որպես թաքստոց է ծառայել և այստեղ են պահվել վանքի սրբություններն ու դանձերը թուրքական կամ պարսկական

[36] John Carswell, New Julfa, Oxford, 1968.

ասպատակությունների ժամանակ[27]։ Բեմի տակ նման թաքստոց XVII դարում հանդիպում է Հարևան Արևիքում՝ Վահրավարի Կարմրավանքում[28]։

Աղոթասրահը լուսավորվում է հյուսիսային և հարավային պատերում բացված երկուական պատուհաններով։ Ժամանակին այն լուսավորվել է նաև գմբեթի մեջ բացված ութ պատուհանով։ Գմբեթի չափերի ու հորինվածքի մասին այժմ կարելի է պատկերացում կազմել միայն լուսանկարներից և Ե. Լալայանի նկարագրությունից։ Գմբեթը կառուցված է եղել աղյուսից, և թմբուկը բավական բարձր է եղել՝ 5,7 մ[29]։ Գմբեթի և ողջ եկեղեցու բարձրության հարաբերությունը կազմում է մոտ 1։2։ Սակայն տրամագիծը մեծ չէ՝ 5,7 մ և այդ պատճառով այն ունի բավական սլացիկ համաչափություններ, որին նպաստել է և սրածայր բրգաձև վեղարը։ Թմբուկը եղել է ութանիստ, որոնցից յուրաքանչյուրի ստորին մասում բացվել է կամարակապ փոքր լուսամուտ։ Նիստերը մշակված են ողջ բարձրությամբ ուղղանկյուն շրջանակով, որի մեջ ներդծված են սլաքաձև կամարով ավարտվող երկուական խորշեր։ Ներքևի խորշերի մեջ էլ տեղադրված են լուսամուտները։

Եկեղեցու միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում և բացվում է դեպի դավիթը։ Վերջինիս ուղղանկյուն ծավալը կառուցվում է կիսամշակ բազալտե քարերից, կրաշաղախով։ Աստապատի վանքի դավիթը իր հորինվածքով առանձնանում է ուշ միջնադարի Հայաստանի նույնատիպ կառուցվածքներից։ ԵՒԼ XVII—XVIII դդ. վանքերի և անապատների համալիրների դավիթները Վասպուրականում ունեն ավանդական քառամույթ հորինվածք (Լիմ, Կտուց, Նարեկավանք, Վարագավանք, Աղթամար)[30], իսկ Սյունիքում և Այրարատում՝ եռակամար դավիթ-սրահի հորինվածք, ապա Աստապատում դավիթն ունի երկու մույթ և նրա զանգակատան գմբեթը բարձրացել է մույթերից դեպի եկեղեցու արևմտյան պատին ընկած կամարների վրա։ Դավթի մույթերը բավական զանգվածեղ են (0,9×1,40 մ), ուղղանկյուն կտրվածքով և գմբեթից բացի իրենց վրա կրում են նաև ծածկի թաղերը։ Սոսկ երկու մույթերի առկայությունը պատճառ է հանդիսացել դավթի երկարության զգալի կրճատման (7,6 մ), մինչդեռ լայնությունը կազմում է 11,6 մ (ներսի չափերը)։ Դավիթը հատակագծում ստացվել է ձգված հարավ-հյուսիս ուղղությամբ։ Մուտքերը երկուսն են՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում։

Հիմնական հուշարձանախմբի (եկեղեցի և դավիթ) գլխավոր՝ արևելք-արևմուտք առանցքով մուտքի բացակայությունը հետևանք է վանքի գլխավոր հատակագծի առանձնահատկությունների և բխում է ֆունկցիոնալ անհրաժեշտությունից։ Աստապատի վանքը արևմուտքից շրջապատի նկատմամբ բավական բարձր է տեղադրված և այս կողմից մոտենալու հնարավորություն չունի, որի հետևանքով վանքի մուտքը իրականացված է արևելքից։ Իսկ դավթի մուտքը արևմուտքից բացելու դեպքում այցելուն պետք է շրջանցեր ոչ միայն եկեղեցին, այլև դավիթը։ Եվ ճանապարհը կրճատելու, ինչպես նաև վանքի

27 Ե. Լալայան, Նախճավան, էջ 153։

28 Ս. Հասրաթյան. Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1972.

29 Ե. Լալայան, Նախճավան, էջ 152։

30 Ե. Լալայան, Վասպուրական, Նշանավոր վանքեր։

արևմտյան կողմի բնակելի սենյակները այցելուների հոսքից մեկուսացնելու համար գավթի արևմտյան ճակատը իսուլ է արված։

Հետաքրքրական է Աստապատի վանքի շինարարական տեխնիկան։ Մինչև այժմ գրականության մեջ արմատացած է այն տեսակետը (որպես փաստ ներկայացվող), որ եկեղեցին կառուցված է աղյուսից։ Լալայանը, նկարագրելով վանքի եկեղեցին, գրում է, որ այն «... շինված է կարմիր, տաշած քարից մինչև մի սաժեն բարձրության, չհաշված հիմքը, և թրծած աղյուսից՝ մնացած մասը և գմբեթը»[31]։ Նույնը նշում է և Ալիշանը[32]։ Աստապատում գմբեթը, իրոք, կառուցված է եղել աղյուսից։ Սա նորույթ չէր XVII դարի հայ ճարտարապետական հուշարձաններում՝ եկեղեցու հիմնական ծավալը քարից, իսկ գմբեթը աղյուսից կառուցելը տարածված էր Դողթանում, Մեղրիում։ Աղյուսի գմբեթ ունեն Ադուլիսի ս. Քրիստափոր, Շոռոթի ս. Հակոբ, Մեղրու վանքի, Մեղրու ս. Աստվածածին եկեղեցիները և ուրիշներ։ Սակայն Աստապատի վանքի եկեղեցին ոչ թե կառուցված է աղյուսից, այլ երեսպատված, իսկ հիմնական ծավալը շինված է կիսամշակ և անմշակ բազալտ քարից ու որձաքարից, կրաշաղախով։ Սա, իսկապես, հազվագյուտ է Հայաստանի միջնադարյան շինարարական տեխնիկայում։ XVII դարում քարաշեն եկեղեցիների ներսում օգտագործվել է աղյուս. օրինակ՝ Մեղրու վանքի ներսակողմը մշակված է աղյուսի դեկորատիվ որմնակամարներով։ Աղյուսը լայնորեն կիրառվել է նաև Աստապատի վանքի եկեղեցու և գավթի ներսում՝ աղյուսից են շարված որմնակամարները, բեմի խորշերը, «պատերհանները», գմբեթի առագաստային անցումը և այլն։ Սակայն եկեղեցու ներսակողմը որմնանկարների համար սկզբից ևեթ սվաղվել է ու աղյուսը ոչ մի դեր չի խաղացել նրա հարդարանքում։ Իսկ դրսում պատկերը հակառակն է՝ ճակատներում բարև շարվածքի գեղագիտական հատկություններից հրաժարվելը և աղյուսի երեսպատումը իր հետ բերել է աղյուսե ճարտարապետությանը բնորոշ ձևեր։

Աստապատի եկեղեցու պատերի ստորին մասը, դրսից մոտ 1 մ բարձրությամբ, երեսպատված է կարմիր քարով։ Արևելյան և ընդերկայնական ճակատները մշակված են երեքական բարձր, շեղտված սլաքաձև որմնակամարներով։ Նման ուրվագիծ ունեն լուսամուտների, խորշերի վերջավորությունները, եկեղեցու և գավթի կամարները։ Գմբեթատակ քառակուսու առագաստային անցումը, ալիքաձև մշակված, բնորոշ չէ հայ ճարտարապետությանը։ Թե՛ գավթի և թե՛ եկեղեցու ծածկերի կոնստրուկցիաները ևս կրում են օտար շինարվեստի ազդեցությունը։ Այսպես, ծածկի կամարներով բաժանված հատվածները ոչ թե թաղակապ են, այլ կրկնակի կորության թաղանթներ են, որոնք վերևում իրենց ծավալներով դուրս են գալիս տանիքից և գմբեթների տպավորություն են ստեղծում։ Այդ պատճառով եկեղեցու և գավթի տանիքները երկթեք լանջեր չունեն և իրենց ուրվագծով հիշեցնում են մուսուլմանական ճարտարապետության աշխարհիկ կառուցվածքներ։ Այդ միջնադարում հայկական եկեղեցիներում ծածկի նման եղանակը կիրառվել է հատկապես Իսպահանի (Նոր Ջուղայի) պարսկահայ գաղութի եկեղեցի-

31 Ն. Լալայան. Նախճավան, էջ 152։
32 Ալիշան. Սիսական, էջ 511։

ներում և հաղվադեպ հանդիպում է նաև Պարսկաստանին անմիջապես հարևան Նախիջևանի դավառում (օրինակ Զնաբերդի եռանավ բազիլիկան)։

XVII—XVIII դդ. Հայաստանից բացի պարսկական ազդեցությունը նկատվում է նաև հարևան Վրաստանի ճարտարապետական հուշարձաններում (օրինակ, Նինոցմինդայի, Թբիլիսիի Անչիսխատայի եկեղեցիները, Ալավերդու վանքի սեղանատունը, Գրեմիի, Ջիկանիի եկեղեցիները և այլն)[33]։ Սակայն թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում օտար ձևերի ու օտար գեղարվեստական ճաշակի ազդեցությունը (հաճախ պատվիրատուի կողմից թելադրված) սահմանափակ էր և չէր տարածվում կառուցվածքների ողջ հորինվածքի վրա։ Պարսկական, ընդհանրապես մուսուլմանական որոշ ձևերի առկայության դեպքում էլ հուշարձաններն ունեն իրենց ուրույն ազգային կերպարը և հորինվածքը, նրանք այդ դեպքում էլ ամբողջական են, ստեղծված տեղական ճարտարապետության ավանդական ձևերի և նվաճումների հիման վրա։

Աստապատի վանքի եկեղեցու և դավթի պատերի ու ծածկի քանդվելուց հետո տեղում պարզ երևում են շինարարական տեխնիկայի մի շարք մանրամասնություններ ևս։ Բացի այն, որ բացահայտվեց եկեղեցին ոչ թե աղյուսով կառուցելու, այլ երեսպատելու փաստը, երևան եկան կառուցողների կիրառած հակասեյսմիկ միջոցառումները ևս։ Եկեղեցու պատերի շարվածքի մեջ, պարագծով դրված են փայտե հեծաններ։ Այս կառուցողական հնարքը հանդիպում է հայ ճարտարապետական հուշարձաններում դեռ վաղ միջնադարից սկսած։ XVII դարի փայտե գոտիների հանդիպում ենք նաև Սյունիքում (օրինակ, Շատին վանքի պարիսպներում)։ Կառուցվածքների կայունությունն ապահովելու համար հայ շինարարները ձգտել են հնարավորին չափ թեթևացնել նրանց վերին մասերը, որովհետև «... բավական կարևոր նշանակություն ունի շենքի ընդհանուր գանգվածի ծանրության կենտրոնի տեղաբաշխումը։ Կառուցվածքների միևնույն ծավալի դեպքում որքան ցածր լինի տեղադրված ծանրության կենտրոնը, այնքան շենքը լավ կդիմագրի սեյսմիկ ցնցումներին»[34]։ Ուշ միջնադարում դմբեթավոր կառուցվածքներում սա արտահայտվել է, առաջին հերթին, շինանյութի ընտրության հարցում. թե՛ հարավային Սյունիքի և թե՛ Նախիջևանի շրջանի XVII դարի եկեղեցիների մեծ մասի դմբեթը կառուցված է ոչ թե շենքի հիմնական ծավալի շինանյութից բազալտից, այլ աղյուսից։ XVII—XVIII դդ. Հայաստանի ճարտարապետական համալիրներում կառուցվածքների վերին մասի ծանրության նվազեցումը կատարվում էր նաև ծածկի թաղի և տանիքի միջև եղած լիցքի թեթևացումով։ Աստապատի գավթի կամարների, ծածկի կիսաշնդաձև թաղանթների ու տանիքի արանքում, կառուցողական դեր չխաղացող և ավելորդ բեռ հանդիսացող բետոնի լիցքի փոխարեն թողել են թունելանման թաղակապ խորշեր։

Աստապատի վանքի հիմնական հուշարձանախմբի արտաքին տարողությունը պարզ է և համեստ։ Գավիթը փաստորեն զուրկ է գեղարվեստական

---

33 Г. Н. Чубинашвили, Вопросы истории искусства, т. I, Тбилиси, 1970, էջ 308—320։

34 О. Х. Халпахчьян, Строительные традиции народных мастеров Армении, Архитектурное наследство, М., № 3, էջ 67։

տարրերից, և կիսամշակ բարից կառուցված նրա ուղղանկյուն ծավալն ունի բավական անհրապույր տեսք։ Հարդարանքի միակ տարրը դռների պարզունակ շրամուտքերն են (հարավայինը լրիվ քանդված է, և պետք է ենթադրել, որ այն ունեցել է հյուսիսային դռան հորինվածքը)։ Հյուսիսային շրամուտքի դռան ուղղանկյուն բացվածքը ներդծված է կիսաշրջանիկի տրամատ ունեցող որմնակամարի մեջ, որը հանդչում է կրնկաձև մշակված իմպոստների վրա։ Կամարը նույն տրամատով շարունակվում է իմպոստներից ներքև, վերածվելով որմնասյունիկի։ Շրամուտքը շարված է սրբատաշ կարմրավուն քարից, որի պատճառով, չնայած իր համեստ ձևերին, հյուսիսային պատի գորշ ֆոնի վրա բավական տպավորիչ է։

Եկեղեցու արտաքին ճակատների հարդարանքը նույնպես պարզ է՝ աղյուսի դեկորատիվ կամարաշարով։ Ծավալային լուծման մեջ ամենաակտիվ տարրը եղել է բարձր գմբեթը, որն իր չափերի և ավելի մանրամասն մշակման շնորհիվ ողջ ծավալա-տարածական հորինվածքի դոմինանտն է եղել։ Ճոխ հարդարանք ունի եկեղեցու միակ՝ արևմտյան դռան շրամուտքը, որը, սակայն, բացվում է գավթի մեջ և շենքի արտաքին ձևավորման խնդրում դեր չի խաղում։ Այն փաստորեն զարդարում է գավթի սվաղված, որմնանկարներից և հարդարանքից զուրկ ներսակողմը։ Շրամուտքը կրկնում է XII—XIV դդ. տարածված ձևերը։ Դռան ուղղանկյուն բացվածքն ունի սլաքաձև ուրվագծով տիմպան, որը եզերված է ստալակտիտային մշակում ունեցող բավական լայն, նույնպես սլաքաձև կամարով։ Վերջինս նստում է դռան երկու կողմերի զույգ որմնասյուների վրա, պսակված գնդաձև խոյակներով։ Տիմպանը քանդակազարդ է՝ երեք խաչ միահյուսված են բուսական նուրբ զարդաքանդակներով։ Սակայն դռան բացվածքի համեմատ շրամուտքը իր չափերով մեծ է։ Անհամաչափ լայն է ստալակտիտային կամարը, կարճ են որմնասյունները, մեծ՝ խոյակները և այլն։ Շրամուտքի երկու կողմերում, պատի մեջ տեղադրված են երկու խաչքար, որոնք նույնպես դռան ձևավորման տարրերից են (խաչքարերից մեկը թվագրված է 977 թ.)։ Եկեղեցիների շրամուտքերի հորինվածքում խաչքարերի օգտագործումը հայ ճարտարապետության մեջ շատ ավելի վաղ է հանդիպում (օրինակ Մարենիաց վանքի եկեղեցու մուտքը գավթում)։ Հարդարանքի այս հնարքը տարածում ստացավ հատկապես XVII դարում. խաչքարերով զարդարված է, օրինակ, Շնհերի Կուսանաց անապատի եկեղեցու հարավային դուռը, իսկ Սիսիանի շրջանի Գիտաթաղ գյուղի Եռանավ բազիլիկայի (XVII դար) շրամուտքի հորինվածքում խաչքարերը վերջինիս օրգանական մասն են հանդիսանում։ Աստապատում նրանք սոսկ տեղադրված են դռան երկու կողմերում, բայց և այնպես զգալի դեր են խաղում եկեղեցու մուտքի ձևավորման գործում և ուժեղացնում նրա դեղարվեստական արտահայտչականությունը։

Աստապատի եկեղեցու ներսակողմի հարդարանքը իրականացված է բացառապես որմնանկարներով։ Կամարների երեսները, խորանի գմբեթարդը զարդարված են բուսական մոտիվներով որմնանկարներով։ Ընդերկայնական պատերի վերին մասերում կան սյուժետային որմնանկարներ, որոնք բավական վնասված են (հարավային պատի վրա, հավանաբար, պատկերված է ավետման տեսարանը)։ Բեմի խորշերի մեջ, բուսական զարդանկարներով երիզված, պատկերված են միանման դիրքով և հագուստով սրբերի ֆիգուրներ (նույնպես զգալիորեն վնասված)։ Թմբուկը և առագաստները ևս ծածկված

են եղել որմնանկարներով, որոնք նկարագրում է Ե. Լալայանը. «Ութ փոքրիկ պատուհաններ էլ բացվում են գմբեթի ներքևի մասում և որոնց միջև կան հետևյալ սրբերի պատկերները՝ իրենց մակագրությամբ. Սեղբեստրոս Հայրապետ, Թեոդոս Թադավոր (դայիսոնը ձեռին), ս. Ներսես, Արգար Թագավոր (դաստառակը ձեռին), ս. Սահակ Պարթև, Տրդատիոս Թագավոր, ս. Գրիգոր Լուսավորիչ և Կոնստանդիանոս Թագավոր։ Սրանցից ներքև, կամարների անկյուններումն էլ նկարված են չորս ավետարանիչների պատկերները»[35]։ Որմնանկարները, ըստ մակագրության, կատարված են 1859—1866 թթ.[36]։ Վանքի հարդարանքում օգտագործվել են նաև քանդակներ։ Այսպես, գմբեթի քարերի մեջ եղել են երկու առյուծի քանդակ, իսկ արևելյան մեծ դարպասի վրա բանդակված է եղել արծիվ՝ ճանկերի մեջ մի դատ բռնած[37]։

Վանքի մյուս շինություններից համարյա ոչինչ չի մնացել։ Պարիսպները կիսով չափ պահպանվել են արևմտյան և հյուսիսային կողմում, նրանք բարձր են եղել, կառուցված սրբատաշ կարմիր քարից, վանքի բակը շրջապատից զգալի բարձր է տեղադրված և արևելյան, հյուսիսային ու հարավային պարիսպները նաև որպես հենապատ են ծառայել։ Այս պատճառով պարիսպներին կից բնակելի և օժանդակ շենքերը երկհարկ, նույնիսկ եռահարկ են եղել։ Պարիսպներն ուժեղացված են կիսաշրջանաձև աշտարակներով, իսկ զգալի բարձրության և երկարության դեպքում պատերի կայունությունն ու կոշտությունն ապահովելու համար հարավային կողմում նրանք ոչ թե ուղղագիծ են, այլ կոտրտված՝ ելուստներով։ Պարիսպներին կից շինությունների ստորին, նկուղային հարկերը որպես մթերանոցներ ու պահեստներ են օգտագործվել։ Նրանք քարե թաղերով ծածկեր ունեն և դեպի դուրս բացվող լուսամուտներ, որոնք գետնից բավական բարձր են։ Ընդհանրապես, պաշտպանական առումով, Աստապատի վանքը իր տեղադրության և բարձր պարիսպների շնորհիվ բավական անառիկ է։

Բնակելի որոշ կառուցվածքներ քիչ թե շատ պահպանվել են արևմտյան կողմում. նրանք շինված են աղյուսից։ Նրանցից մեկը բարձրանում է թաղակապ նկուղային հարկի վրա, ուղղանկյուն է, հյուսիսից հարավ ձգված։ Ծածկը փայտից է եղել։ Լայն, ուղղանկյուն մեծ լուսամուտները բացվում են ինչպես դեպի վանքի բակը, այնպես էլ դեպի դուրս, դեպի Արաքս գետը։ Աղյուսե պատերը, ամրության համար, ունեն կոնտրֆորսներ։ Պատմիչների ու այցելուների նշած մյուս շենքերը, կոմունալ, արտադրական կառուցվածքները չեն պահպանվել և նրանց հորինվածքը այժմ անհնար է վերականգնել։

Աստապատի ս. Ստեփանոս վանքը կառուցվածքների և նրանց մանրամասների, ինչպես նաև հարդարանքի և շինարարական տեխնիկայի նշված հետաքրքրական առանձնահատկություններով իր ուրույն և արժանի տեղն է գրավում Հայաստանի XVII դարի վանքային անսամբլների շարքում և բավական կարևոր է ուշ միջնադարի հայ ճարտարապետության պատմության շատ հարցերի լուսաբանման համար։

---

35 Ե. Լալայան, Նախճավան, էջ 152։

36 Նույն տեղում, էջ 153։

37 Նույն տեղում։

АРХИТЕКТУРНЫЙ АНСАМБЛЬ АСТАПАТСКОГО МОНАСТЫРЯ

М. М. АСРАТЯН

(Резюме)

Астапатский монастырь расположен южнее города Нахичевани, на высоком берегу реки Аракс. Комплекс имеет четкий прямоугольный план. По периметру стен расположены жилые и подсобные помещения. В центре ансамбля находятся церковь и пристроенный к ней с западной стороны притвор. Церковь принадлежит к редкому в армянской архитектуре типу купольных сооружений с двумя пилонами. Благодаря особенностям архитектурной композиции, а также самобытному декору Астапатский монастырь является важным памятником армянского зодчества позднего средневековья.